Հաստատում եմ:
Դպրոցի տնօրեն՝ /Ա. Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ/
01.09.2022թ.
Հր. №40

ՀՀ Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային տարեկան պլան

Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ պետական լեզուն հայերենն է:
Դպրոցում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

2.Կրթությունը պատկերացնել որպես գիտելիքների, հմտությունների, նորարարությունների, մտածելակերպի եղանակների որոշակի համակարգի յուրացման, դրա հիման վրա անհատի զարգացման համապատասխան մակարդակի ապահովման գործընթաց և արդյունք:

3. Հանրակրթությունը նպատակ է հետապնդում օժանդակել սովորողի մտավոր, բարոյական, զգայական և ֆիզիկական զարգացմանը, բացահայտելով նրա ստեղծագործական ունակությունները, անհատի մարդասիրական բնույթը՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները:

4.Դպրոցի և ընտանիքի առաջնային խնդիր համարել որակյալ կրթության հասանելիության ապահովումը, նորմալ դաստիարակությունը, սոցիալականացումը, սովորողների առողջության պահպանումը:

5.Հանրակրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է:

6.Հանրակրթության պետական կրթակարգի համաձայն.

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Միջին դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողներին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատություններում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

7.Կրթության գործունեության համար բարձրագույն արժեքը մարդն է, իսկ գլխավոր նպատակը՝ նրա ներդաշնակ զարգացումը:

8.Մանկավարժության մեջ գիտելիքների որակը հանդիսանում է ամենաարդիականներից և «հավերժականներից» մեկը:

9.Կարևորել ուսուցչի ամենօրյա վերափոխումն ու գիտելիքների էլ ավելի հարստացումը, հատկապես այսօր, երբ մեթոդների, գործիքների մեծ ընտրություն կա, իսկ գիտելիքի ծավալն անընդհատ փոխվում է:

10.Ժամանակակից մանկավարժական մոտեցումներում կարևոր են ուսուցչին ներկայացվող պահանջները.

ա) ուսուցման ակտիվ մեթոդներին տիրապետելը,
բ) համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունները,
գ) սովորողների մոտ գործնական և կիրառական հմտությունների զարգացումը:

11.Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների բուռն աճի պայմաններում համակարգչային բավարար գրագիտությունը ժամանակակից տեղեկատվական հասարակության կողմից մարդու առջև դրվող հիմնական պահանջներից է:

12.Սովորողների մոտ իմացական և ստեղծագործական, հետազոտական հմտությունների զարգացմանը նպաստում են տեխնոլոգիաների տարբեր տեսակներ՝ համակարգչային տեխնոլոգիաները, պրոբլեմային և հետազոտական ուսուցումը, խաղային ուսուցման տեխնոլոգիան, թեստերի օգտագործումը:

13.Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, կրթության գերնպատակը՝ անձի կայացումը, ապահովելով նրա լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը:

14.Բարեփոխումների պետական և ազգային կարևորագույն խնդիրը համարել կրթության համակարգի առաջանցիկ զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:

15.Գիտական և տեխնիկական նվաճումների բազմաթիվ վկայությունների շնորհիվ կրթությունը դարձել է և կմնա որպես մարդկային հասարակության զարգացումն ապահովող իրական ուժ:

16.Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր ու նյութական արժեքների ամբողջությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐԸ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՆ Է...

ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՔՆԻՆ ԿՅԱՆՔ Է...

Դպրոցի խնդիրները

1. Սովորողների մոտ գիտելիքների համակարգը, կարողություններն ու հմտությունները ձևավորելը համարել դպրոցի գլխավոր խնդիրը:

2. Հասնել նրան, որ աշակերտը դպրոցն ավարտելիս ունենա մի շարք հմտություններ, կարողություններ և գիտելիքների այնպիսի պաշար, որը թույլ կտա նրան լինել ազատ, վերլուծող, քննադատող:

3. Կարևորել կրթության հասանելիությունը **(առկա և հեռավար)** բոլորի համար. ակնհայտ է, որ աշխարհում լավ հանրակրթական համակարգ ունեն այն երկրները, որոնք առավելագույնս հասանելի են դարձնում կրթությունը բոլորի համար:

4. Ուսուցման առավել բնորոշ գծերից մեկն է՝ հրաժարվել միջին աշակերտի վրա կողմնորոշվելուց և ստեղծել պայմաններ՝ յուրաքանչյուր անհատի օպտիմալ զարգացման համար:

5. Երեխաներին և սովորողներին ծանոթացնել քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին և դրանց հետ հաղորդակցվելու միջոցով նրանց մեջ դաստիարակել բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, հարգանք ծնողների նկատմամբ:

6. Երեխաներին և սովորողներին օգնել՝ կարևորելու ընտանեկան և հասարակական կյանքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածության, քաղաքացիական հասարակության մեջ իրավունքների և պարտականությունների գիտակցման նշանակությունը:

7. Ապահովել ՏՀՏ-ի կիրառումը պարտադիր առարկաների ուսուցման գործընթացում՝ որպես դասավանդման և ուսուցման նոր միջոց:

8. Ուսուցման բովանդակության միջոցով զարգացնել համեմատելու, վերլուծելու, պատճառահետևանքային կապերի մեջ հետևանքը մեկնաբանելու կարողություններ:

9. Հայոց պատմության էջերի քննարկման միջոցով ձևավորել և կրթել մեր ազգին բնորոշ համամարդկային արժեքներով ղեկավարվող քաղաքացիներ:

10. Սովորողներին և երեխաներին օգնել ճանաչելու բուսական և կենդանական աշխարհը, նրանց մասնակից դարձնել բնապահպանական աշխատանքներին:

11. Յուրաքանչյուր աշակերտի մոտ արթնացնել հետաքրքրություն, և հասնել նրան, որ ուսուցիչը գտնի աշակերտին հետաքրքրող ուղղությունը:

12. Հասնել նրան, որ ցանկացած աշակերտ գտնի իր հետաքրքրությունը դպրոցում, և ցանկացած աշակերտ սովորի որևէ առարկա, եթե զգում է այդ առարկայի նկատմամբ ուսուցչի հետաքրքրությունը:

13. Գործնական աշխատանքների, լաբորատոր և ցուցադրական փորձերի հաճախակի օգտագործումով թույլ տալ ստանալու գիտելիքների կայուն բարձրորակ՝ ամենից առաջ դրանց գիտակցվածության հաշվին:

14. Նպաստել ընթերցանության նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացմանը:

15. Սովորողների մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական մտածողություն, թվաբանական գիտելիքներ և մեթոդներ, դրանք գործնական իրադրություններում կիրառելու, որոշումներ կայացնելու, սեփական և ուրիշների դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողություններ, զարգացնել ուշադրությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, հնարամտությունը, նպատակասլացությունը, համբերությունը, հանդուրժողականությունը:

16. Օգնել երեխաներին և սովորողներին՝ օգտվել բարեկիրթ հաղորդակցման կանոններից, մասնակցել զրույցին, հարգել ընկերոջ կարծիքը և անհրաժեշտության դեպքում նոր, ավելի համոզիչ փաստարկներ բերել:

17. Մեծ ուշադրություն դարձնել հաղորդակցական կարողությունների ու հմտությունների զարգացմանը դրանց հիմնական բաղադրիչներով՝ լսել, խոսել, կարդալ, գրել, իսկ ուսումնական գործունեության ձևերում զգալի տեղ տալ խաղային միջոցներին և ստեղծագործական աշխատանքներին, որոնց նպատակներից է կապեր հաստատել մայրենի լեզվի և արվեստի տարբեր բնագավառների հետ (երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա…):

18. Օտար լեզուների ուսուցման միջոցով նպաստել անհատականության ձևավորմանն ու սոցիալացմանը բազմամշակութային և բազմալեզու աշխարհի հարափոփոխ պայմաններում:

19. Սպորտային խաղերի և մրցումների միջոցով նպաստել առողջ սերունդ դաստիարակելու գործին:

20. Ուշադրության կենտրոնում պահել սովորողների ուսումնական գործընթացին սոցիալականացման վրա ազդող անձնային խնդիրների բացահայտման հաղթահարումը՝ նրանց սոցիալական օգնություն ցուցաբերելու նպատակով:

21. Մշակել անհրաժեշտ հմտություններ ու մեթոդներ՝ ծագած կոնֆլիկտները կառավարելու և դրանց թիվը նվազեցնելու համար:

22. Մեծարել և արժևորել մեր պետականության կարևորագույն խորհրդանիշերը:

23. Ստեղծել առողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտ՝ պատանիներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու հնարավորության համար:

24. Իրականացնել ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով:

25. Երեխաների և սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, նրանց ներուժի բացահայտման նպատակով իրականացնել հոգեբանամանկավարժական ուսումնասիրություն և դիտարկում ուսումնառության ողջ ընթացքում և տարիքային յուրաքանչյուր փուլում:

26. Դասղեկի ժամերին կարևորել «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան որպես ընդհանուր կրթության բաղկացուցիչ մասերից մեկը: ՈՒսուցման նպատակը համարել սովորողների կողմից գիտելիքների յուրացումը, նրանց հմտությունների և ունակությունների զարգացումը, տեսականը գործնականորեն կիրառելու կարողությունների ձեռքբերումը՝ խաղաղ և պատերազմական ժամանակների բարդ իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ գործողությունների դիմելու համար:

27. Ուսումնական պրոցեսում կարևորել ուսուցանող գնահատումը՝ նպատակ դնելով ճշգրտելու դասավանդման նպատակահարմար մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը, վերհանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները և սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու անհրաժեշտության գիտակցմանը:

28. Հետևել ***կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման*** կանոններին /ԱՆ 18.09.2020թ. №24-Ն հրաման (փոփոխ. 20.08.2021-ի № 65-Ն հրաման):

29. Զարգացնել համընդհանուր ներառական կրթության համակարգը, ապահովել բոլոր աշակերտների լիարժեք մասնակցությունը, ստեղծել հավասար հնարավորություններ...

Ներառական որակյալ կրթություն.
համագործակցություն, հավասարություն և մասնակցություն
Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում…

Մենք, ոչ թե ես...

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Բոլորի համար, բոլորը միասին…

Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք:

Հիմնական կրթությունը ուսումնական հաստատությունում անվճար է:

Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը:

Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն:

Առողջության սահմանափակ հնարավորություններով անձինք հոգեբանամանկավարժական և բժշկական կամ բժշկասոցիալական փորձաքննության համապատասխան եզրակացության առկայության դեպքում ունեն սովորական կրթական հաստատություններում կրթվելու իրավունք:

Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:

Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է:

Ներառական կրթությունը նպաստավոր է թե՛ կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ սովորողների իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է, երբ շահում է երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը:

Ներառական կրթության պարագայում ԿԱՊԿՈՒ երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ, երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ իր երեխայի հետ միջավայրի շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերվում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը:

Ներառական կրթությունն իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով:

Ներառական կրթության պարագայում, պետությունն աստիճանաբար իրականացնում է սոցիալական հավասարության ապահովման խնդրում իր դերակատարումը՝ նվազեցնում է հասարակության շերտավորումն ու նպաստում նրա հոգեբանական առողջացմանը, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը:

Երեխաների շրջանում իրավահավասարության ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Ի վերջո ներառական կրթությունը նպաստում է երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացմանը՝ համաշխարհային զարգացման ժամանակակից միտումներին և մարտահրավերներին համահունչ:

Այսպիսով, ներառական կրթությունը, ենթադրում է հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասարհնարա-

վորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացակամ, երեխաների առողջության համար ապահով ու անվտանգ:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի...

Կարևորել համընդհանուր ներառական կրթությունը:

Ներառական ուսուցումը կազմակերպել հոգեբանամանկավարժական և բժշկական ցուցումներին (հակացուցումներին) համապատասխան:

Արդիականացնել աշխատակազմի գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում:

Ապահովել բավարար ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿՈՒ երեխաների սովորելուն և ուսումնական միջավայրը հարմարեցնելու նրանց կարիքներին:

Մշակել և իրականացնել միջոցառումների պլան՝ ապահովելով դասարանական և արտադասարանական աշխատանքներին ԿԱՊԿՈՒ երեխաների հավասար մասնակցությունը:

Ապահովել ուսումնական ծրագրերի, դասի պլանի և ուսուցման գործընթացի հարմարեցվածությունը ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին և մշտապես խրախուսել:

Մշտապես հետևել ԿԱՊԿՈՒ երեխաների հավասարապես մասնակցությանը դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի:

Ապահովել սովորողների գիտակցման անհրաժեշտությունը ԿԱՊԿՈՒ իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման ուղղությամբ:

ԿԱՊԿՈՒ երեխաների տեսանկյունից ստեղծել հավասար պայմաններ և նրանց կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն:

Կազմել ԱՈՒՊ ներառական կրթությանն աջակցող մասնագետների՝ սովորողի հետ աշխատող ուսուցիչների, դասվար-դասղեկների, հատուկ և սոցիալական մանկավարժների, հոգեբանի, լոգոպեդի կողմից:

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ,

ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ

№	*Աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետ*	*Պատասխա-նատու անձ*	*Նշում կատ. մասին*
1	Կատարել կոմպլեկտավորում . ա) տարրական դպրոց՝ **1-4 –րդ** դասարաններ բ) միջին դպրոց՝ **5-9-րդ** դասարաններ գ) ավագ դպրոց 10-12 –րդ դասարաններ	01.09.2022թ. 01.01.2023թ.	տնօրեն	
2	Հաստատել ուսպլանը մանկխորհրդի որոշման հիման վրա:	01.09.2022թ.	տնօրեն	
3	Կազմել և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել. • Տարիֆիկացիոն ցուցակը • Հաստիքացուցակը • Նախահաշիվը • Հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը: Ֆինանսատնտեսական, ուսումնադաստիա-րակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:	սեպտեմբեր հունվար	տնօրեն հաշվապահ	

4	Հաստատել. • Մանկխորհրդի կազմը • Առարկայական մեթոդմիավորումների ղեկավարների, դասղեկ-դասվարների կազմը • Ուսուցչական հերթապահության կարգը • Ուստարվա միջոցառումների պլանը • Մ/մ արձանագրությունների մատյանները • Դասալսումների գրանցման մատյանները • 1-ին դասարանի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող անվճար կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերը • Սովորողների ջերմաչափման և առողջական վիճակի վերաբերյալ զննման արդյունքների գրանցման գրանցամատ-յանները • Ախտահանման գործընթացների գրանցման վերաբերյալ գրանցամատյանը:	սեպտեմբեր	տնօրեն	

5	Հաստատել. 1. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքային տարեկան պլանը (մանկխորհրդի ներկայացմամբ): 2. Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի աշխատանքային տարեկան պլանը: 3. Դասվար-դասղեկների դաստիարակչական աշխատանքային տարեկան պլանները: 4. Մ/մ աշխատանքային տարեկան պլանները: 5. Զինղեկի և ՔՊ աշխատանքային տարեկան պլանները: 6.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աշխատակիցների, ուսուցչի օգնականի աշխատանքային տարեկան պլանը: 7.Գրադարանավարի աշխատանքային տարեկան պլանը: 9.Ուսուցիչների թեմատիկ պլանները: 10.Դասացուցակը (1-ին և 2-րդ կիսամյակների): 11.ՈՒսուցիչների բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյանը:	սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր սեպտեմբեր հունվար սեպտեմբեր հունվար	տնօրեն	
6	Իրականացնել վերահսկողություն. • Պլանավորված աշխատանքների կատարման • Հաճախումների, դրանց հաշվառման • Էլեկտրոնային մատյանների վարման • Էլեկտրոնային տարբերակով գրանցումներին (ըստ ԿԳՄՍ պահանջի՝ *ներբեռնած Word կամ PDF*) • Մատենավարության աշխատանքների նկատմամբ (ըստ անհրաժեշտության):	պարբերաբար	տնօրեն, տնօրենի տեղակալ	
7	Կազմել հաշվետվություններ, հաստատել և ներկայացնել կառավարման խորհրդին. • Ուսումնադաստիարակչական (մանկխորհրդի ներկայացմամբ՝ տնօրենի տեղակալի, դասղեկ-դասվարների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, մանկավարժների, ուսուցչի օգնականի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աշխատակիցների) և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:	ուստարվա ավարտ եռամսյակը մեկ անգամ	տնօրեն հաշվապահ	

8	Կատարել լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված կարգով արվող հրահանգները (***կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման*** կանոններին /ԱՆ 18.09.2020թ. №24-Ն հրաման (փոփոխ. 04.05.2021թ. №28-Ն հր., 20.08.2021-ի № 65-Ն հրաման) ***համապատասխան)***:	ուստարվա ընթացքում	տնօրեն և այլք՝ ըստ ոլորտների	
9	Ապահովել ԿԳՄՍ-ի կողմից հատկացված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:	ուստարվա ընթացքում	տնօրեն և այլք՝ ըստ ոլորտների	

Ֆինանսատնտեսական գործունեություն, ուսումնանյութական բազայի ամրապնդում

№	*Աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետ*	*Պատաս-խանատու*	*Նշում կատ. մասին*
1	Ճշգրիտ հաշվառել դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներն օրենսդրությանը համա-պատասխան:	մշտապես	տնօրեն, հաշվա-պահ	
2	Կազմել հաստիքացուցակը, տարիֆիկացիան, ծախսերի նախահաշիվը և ներկայացնել դպրոցի խորհրդի քըն-նարկմանը, ապա ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպե-տարան՝ հաստատման:	հունվար, սեպտեմբեր	տնօրեն, հաշվա-պահ	
3	Պլանավորել և կազմել դպրոցի առաջիկա տարվա բյուջեի (ծախսերի նախահաշվի) (այսուհետ՝ բյուջե) նախագիծը:	սեպտեմբերի 1-ից սկսած	տնօրեն	
4	Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, բյուջեի հաստատման և կատարման մասին հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով կազմել դպրոցի բյուջետային օրացույց:	01.09.22թ.-15.03.2023թ.	տնօրեն	
5	Ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ գույք, ուսում-նադիտողական պարագաներ, օժանդակ նյութեր, գոր-ծիքներ, արքավորումներ, գեղարվեստական գրական-ություն:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնտես-վար, հաշվա-պահ	
6	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավո-րումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիտողական պարագաների և այլ նյութերի օգտագործման ու պահպանման ուղղությամբ:	մշտապես	տնօրինու-թյուն	
7	Բարձրացնել դպրոցի տեխնիկական անձնակազմի պատասխանատվությունը շենքի և շրջակայքի մաք-րության հարցում:	մշտապես	տնօրինու-թյուն	

8	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի և սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր-դեկտեմբեր	տնտեսվար	
9	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	մշտապես	տնտեսվար	
10	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը, խաղահրապարակը, հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	մշտապես	տնտեսվար	
11	Հետևել դպրոցի ջերմամեկուսացմանը, ջեռուցման անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնտեսվար	
12	Ժամանակին հաշվարկել և վճարել աշխատողների աշխատավարձը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, հաշվապահ	
13	Ժամանակին լրացնել և հանձնել ֆինանսական հաշվետվությունները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, հաշվապահ	
14	Ժամանակին կազմել գնումների պլան և ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետարան:	սեպտեմբեր հունվար	տնօրեն, հաշվապահ, տնտեսվար	
15	Ժամանակին հայտարարել գնումների մրցույթ (ԳՀ) նախակրթարանի սաների և 1-4-րդ դասարանների սովորողների սննդի (տրամադրման դեպքում) ձեռքբերման համար:	օգոստոս հունվար	գնումների համակարգող, հանձնաժողովներ	
16	Զարգացնել կարողություններ՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար:	ուստարվա ընթացքում	տնօրեն, հաշվապահ	
17	Ժամանակին կատարել գնումներ ***կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման*** կանոններին /ԱՆ 18.09.2020թ. №24-Ն հրաման (փոփոխ. 04.05.2021թ.№28-Ն, 20.08.2021-ի № 65-Ն հրաման) համապատասխան (պաշտպանիչ միջոցներ, ախտահանիչ նյութեր):	ուստարվա ընթացքում	տնօրեն, հաշվապահ	

Ներդպրոցական վերահսկողության համակարգ

№	*Աշխատանքի բովանդակությունը*	*Կատար-ման ժամկետ*	*Պատաս-խանատու*	*Նշում կատ. մասին*
1	Յուրաքանչյուր երկուշաբթի օր անցկացնել տնօրինության խորհրդակցություն, լսել տնօրինության անդամների նախորդ շաբաթվա աշխատանքների կատարողականության մասին և քննարկել գալիք շաբաթվա աշխատանքային ծրագրերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Ուսուցիչների բացակայությունները գրառել ուսուցիչ-ների բացակայությունների հաշվառման մատյանում: Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրա-ցուցիչ պարապմունքների կամ փոխարինող ուսուցիչ-ների միջոցով:	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղա-կալ	
3	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: Թեմատիկ պլանավորումների նպա-տակը համարել թեմայի ուսումնասիրման համար ուսուցչի և աշակերտի նպատակների ու խնդիրների, նյութի բովանդակության, միջոցների, մեթոդների ու հնարքների որոշումն ու հստակեցումը:	սեպտեմբեր	տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղա-կալներ	
4	Ստուգել լաբորատոր, գործնական, թեմատիկ, ամփոփիչ աշխատանքների կատարման վիճակը տարբեր առարկաներից (***կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման*** կանոններին /ԱՆ 18.09.2020թ. №24-Ն հրաման (փոփոխ. 04.05.2021թ. №28-Ն հր., 20.08.2021-ի № 65-Ն հրաման) ***համապատասխան)***:	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղա-կալներ, մ/մ նախա-գահներ	
5	Ստուգել ետ մնացող սովորողների արտաժամյա անվճար պարապմունքների վիճակը ***(ըստ անհրաժեշտության՝ հեռավար):***	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալներ	

6	Ստուգել օրվա դասի պլանները, այն համարել թեմատիկ պլանում արտացոլված աշխատանքների նպատակների, բովանդակության, միջոցների, հնարքների ու ձևերի հստակեցում և մանրամասնում առանձին դասի շրջանակներում:	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	
7	Ստուգել ուսումնական և դաստիարակչական ծրագրերի կատարողականությունը, արդյունքները քննարկել տնօրինության խորհրդակցություններում:	դեկտեմբեր մայիս	տնօրենի տեղակալ	
8	Ամիսը մեկ անգամ ստուգել դասարանական և մ/մ պատի թերթերը՝ նորացված նյութերով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալ	
9	Ուսումնասիրել դասվար-դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասվար-դասղեկների և տնօրինության խորհրդակցություն-ներում (ըստ անհրաժեշտության՝ հեռավար):	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	
10	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության խոր-հրդակցության ժամանակ քննարկել սովորողների հաճախումների հարցը (բացակայությունները պատճառաբանված):	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ դասղեկներ	
11	Պահպանել դասաժամերին սովորողների համակարգչից օգտվելու թույլատրելի ժամանակն ըստ տարիքային առանձնահատկությունների:	մշտապես	տնօրինու-թյուն	
12	Ուշադրություն դարձնել յուրաքանչյուր տարիքի համար նախատեսված թույլատրելի ծանրություն կրելու հիգիենիկ նորմին՝ դպրոցական պայուսակի ամենօրյա ուսումնական հավաքածուով և գրենական պիտույք-ներով:	մշտապես	տնօրինու-թյուն	
13	Հետևել « Դպրոցական սնունդ » ծրագրի իրականացմանը **1-4**-րդ դասարաններում :	ուստարվա ընթացքում	տնօրինու-թյուն, ծնողխորհուրդ	
14	Ուսումնական պրոցեսում կարևորել ուսուցանող գնահատումը՝ նպատակ դնելով ճշգրտելու դասա-վանդման նպատակահարմար մեթոդները, շարունա-կաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման	ուստարվա ընթացքում	տնօրինու-թյուն	

	տարրապատկերը, վերհանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները և սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու անհրաժեշտության գիտակցմանը:			
15	Հետևել համընդհանուր ներառական կրթության ճշգրիտ իրականացման աշխատանքներին՝ ապահովելով իրավահավասար մթնոլորտ:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
16	Առաջնորդվել «Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին» կարգախոսով…	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
17	Պատասխանատվություն կրել մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար:	ուստարվա ընթացքում	տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	
18	Պատասխանատվություն կրել դպրոցական մակար-դակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման և անհատական ուսուցման պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) մշակման, իրականացման և գնահատման համար:	ուստարվա ընթացքում	տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	
19	Պահպանել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր սովորողի համար կազմված անհատական գործը:	ուստարվա ընթացքում	տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	
20	Դիտարկել, բացահայտել և կանխել անձի հոգեկան գործընթացների, վիճակների դժվարությունները և շեղումները:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
21	Հայտնաբերել երեխայի անձի կայացումը (ինքնահաստատում և ինքնադրսևորում) դժվարացնող, խոչընդոտող պայմանները, խորհրդատվության և վերականգնողական միջոցներով օգնել սովորողին, մանկավարժներին, ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին)՝ սովորողի հոգեկան առողջության հետ կապված խնդիրների լուծմանը, հոգեբանական խնդիրների (այդ թվում՝ հուզակամային) հաղթահարմանը:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	

22	Ուսումնական հաստատությունում աշխատանք տանել սովորողների ուսումնական գործընթացի և սոցիալականացման վրա ազդող անձնային խնդիրների բացահայտման հաղթահարման ուղղությամբ՝ նրանց սոցիալական օգնություն ցուցաբերելու նպատակով:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
23	Ուսումնասիրել սովորողների սոցիալական հարմարման, ինտեգրման և շրջապատի հետ հաղորդակցության դժվարությունները և իրականացնել դրանց կանխարգելմանն ու հաղթահարմանը նպաստող աշխատանքներ:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
24	Մասնակցել սովորողների (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) անհատական ուսումնական պլանների մշակմանը, սոցիալական հարմարմանը նպատակաուղղված այլ ծրագրերի մշակման և դրանց իրագործման աշխատանքներին:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
25	Մասնակցել ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
26	Բացահայտել, դիտարկել, հետազոտել և գնահատել նախակրթարանի սաների և սովորողների մոտ նկատված սոցիալմանկավարժական խնդիրները:	ուստարվա ընթացքում	Ուսուցչի օգնական դասղեկներ դասվարներ	
27	Համալրել դասագրքերի, գիտական, գիտահանրամատչելի, մեթոդական, գեղարվեստական գրքերի, տեղեկատուների, ճյուղային գրականության ամբողջական հավաքածու՝ թղթային և էլեկտրոնային կրիչներով:	ուստարվա ընթացքում	տնօրինություն գրադարանավար	
28	Կազմակերպել ֆոնդի տեղաբաշխումը, պահպանումը, տեղեկատվության տրամադրումը բաժանորդներին, վարում գրադարանային ֆոնդի տեղեկատու-մատենագիտական, այբբենական ցանկեր, թեմատիկ և էլեկտրոնային քարտադարան, բաժանորդական քարտերի հաշվառում, հաստատության կարիքներից բխող տվյալների բազա:	ուստարվա ընթացքում	տնօրինություն գրադարանավար	
29	Համագործակցել այլ գրադարանների և մշակութային հիմնարկների, տեղեկատվական կենտրոնների հետ գրադարանային հավաքածուի համալրման և արդյունավետ փորձի ներմուծման նպատակով:	ուստարվա ընթացքում	տնօրինություն գրադարանավար	

35	Աջակցել սովորողներին՝ ընթերցասրահում դասերին պատրաստվելուն՝ օգտագործելով գրադարանային հավաքածուում առկա տեղեկատվությունը, այդ թվում՝ էլեկտրոնային (համացանցի) ռեսուրսները (պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը):	ուստարվա ընթացքում	տնօրինություն գրադարանավար	
36	Օժանդակել շնորհանդեսների, գրական քննարկումների, կինոդիտումների, ներկայացումների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը(պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը):	ուստարվա ընթացքում	տնօրինություն գրադարանավար	
37	Օգնել ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	
38	Աջակցել ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	
39	Աջակցել ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՈՒՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	
40	Օժանդակել ուսուցիչներին բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	
41	Մասնակցել ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	
42	Ուսուցիչների հետ միասին բացահայտել, դիտարկել, հետազոտել երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանա-մանկավարժական խնդիրները:	ուստարվա ընթացքում	ուսուցչի օգնական	

43	Կարևորել **կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման** կանոններին /ԱՆ 18.09.2020թ. №24-Ն հրաման (փոփոխ. 04.05.2021թ. №28-Ն, 20.08.2021թ.-ի №65-Ն հրաման)/ **պահանջների կատարումը** (համաճարակային իրավիճակից ելնելով):	ուստարվա ընթացքում	տնօրինություն	

Դաստիարակչական աշխատանքներ

№	*Աշխատանքի բովանդակությունը*	*Կատար-ման ժամկետ*	*Պատասխա-նատու*	*Նշում կատ. մասին*
1	Դաստիարակության հիմքում դնել սովորողների պահանջմունքներն ու իրավունքները, ազգային արժեքները, ավանդույթներն ու գաղափարախոսությունը, հումանիստական ու բնապահպանական աշխարհայացքը:	մշտապես	տնօրինություն	
2	Ապահովել սովորողի արժանապատվության նկատմամբ՝ հարգանքը զուգակցված բարձր պահանջկոտության հետ, համապատասխանությունը սովորողների տարի-քային առանձնահատկություններին և շարունա-կականությունը կրթության՝ մինչև բուհական մակարդակներ, զարգացման ինքնադրսևորման և մասնակցության հավասար հնարավորություններ, սովորողների գործուն մաս-նակցությունը կրթադաստիարակչական գործընթացին:	մշտապես	տնօրինություն	

3	Դաստիարակչական աշխատանքների ղեկավարումն իրականացնել ժողովրդավարական սկզբունքներով և այն ծառայեցնել սովորողների բազմակողմանի դաստիարակությանը. **ա)**գեղագիտական դաստիարակություն - նպատակը՝ մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: **բ)**հայեցի դաստիարակություն - նպատակը՝ հարգանք ՀՀ պատմության, մշակույթի և ազգային տոների նկատմամբ: **գ)**ռազմա-հայրենասիրական դաստիարակություն–նպատակը՝ հայոց բանակի, հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նկատմամբ պատասխանատվության ու հարգանքի ձևավորում, հային բնորոշ առաքինությունների պահպանում: **դ)**քաղաքացիական - բարոյական դաստիարակություն- նպատակը՝ քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ, մեծարանք արժանիներին: **ե)**էկոլոգիական դաստիարակություն - նպատակը՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում: **զ)**աշխատանքային դաստիարակություն-նպատակը՝ աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի ձևավորում: **է)**իրավական դաստիարակություն - նպատակը՝ իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: **ը)**ֆիզիկական-առողջապահական դաստիարակություն-նպատակը՝ ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: **թ)**մտավոր դաստիարակություն- նպատակը՝ զինել սովորողներին համակարգված գիտելիքներով՝ ձևավորելով գիտական աշխարհայացք: **ժ)**սեռական դաստիարակություն - նպատակը՝ ձևավորել բժշկամանկավարժական, սոցիալական, հիգիենիկ, բարոյագեղագիտական գիտելիքների	մշտապես	տնօրինություն	

	համակարգ:			
4	Սովորողների դաստիարակության հարցերով զբաղվելու են բոլոր աշխատողները, իսկ անմիջական պատասխանատվությունը դնել դասվարների, դասղեկների վրա:	մշտապես	տնօրինություն	
5	Օգնել դասվար-դասղեկներին՝ կազմելու դաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և ներկայացնել հաստատման:	օգոստոս սեպտեմբեր	տնօրեն	
6	Ամիսը **մեկ անգամ** կազմակերպել դասվար-դասղեկների խորհրդակցություններ, լսել դասվար-դասղեկների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, կարդալ զեկուցումներ և քննարկել (ըստ անհրաժեշտության՝ հեռավար):	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	Շաբաթը **մեկ անգամ** անցկացնել դասվար-դասղեկի ժամ (հեռավար), այն ուղղել ուսումնական, դաստիարակչական, կարգապահական խնդիրների լուծմանը, ինչպես նաև սովորողների հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, նախաձեռնողական, գնահատման և ինքնագնահատման հմտությունների զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը:	ուստարվա ընթացքում	դասվարներ, դասղեկներ	
8	Ծնողական ժողովներին (**2ամիսը** մեկ անգամ) ամուր հիմքերի վրա դնել սովորող-ծնող-ընտանիք, երեխա-ծնող-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ (ըստ անհրաժեշտության՝ հեռավար):	ուստարվա ընթացքում	դասվարներ, դասղեկներ	
9	Հաճախակի հետևել աշակերտների գրենական պիտույքների, դասագրքերի առկայությանը:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
10	Կապ պահպանել անչափահասների ոստիկանության աշխատակիցների հետ, լսել զեկուցումներ համապատասխան թեմաներով և քննարկել:	մշտապես	տնօրինություն	
11	Օժանդակել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովմանը, աջակցել դպրոցական ինքնավարությանը և վերահսկողությանը:	մշտապես	տնօրինություն	
12	Ձևավորել դպրոցական աշակերտական խորհուրդը՝ նպաստելով սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	

13	Դպրոցում աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ առողջ հարաբերությունների ապահովում. **ա)**խթանել, ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը ✓ Մասնակցել աշակերտական խորհրդի նիստերին, կատարել առաջարկություններ ✓ Լսել աշխատանքային ծրագրերի կատարման հաշվետվություններ՝ խրախուսելով լավագույն նախաձեռնությունների, ակտիվ մասնակցության համար ✓ Անցկացնել անանուն հարցումներ աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ աշակերտների շրջանում ✓ Մասնակցել արդյունքների վերլուծությանը ✓ Խմբավորել առաջարկություններ՝ դրանց անդրադառնալու նպատակով ✓ Աջակցել աշակերտական խորհրդին իր նախաձեռնությունների մեջ **բ)**ակտիվացնել ծնողխորհրդի աշխատանքը ✓ Մասնակցել ծնողխորհրդի նիստերին ✓ Առաջարկություններով հանդես գալ ծնողխորհրդի աշխատանքային պլանի մշակման համար ✓ Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաղորդումով հանդես գալ ✓ Լսել ծնողների հաշվետվությունները իրենց կատարած աշխատանքի մասին ✓ Քննարկել ծնողների առաջարկությունները դպրոցի գործընթացների մասին ✓ Կազմակերպել համատեղ միջոցառումներ ✓ Աջակցել իրենց նախաձեռնություններում ✓ Աջակցել դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունե-ցող սովորողների մանկավարժահոգեբանական	ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում	տնօրեն աշխորհուրդ Ծնողական խորհրդի նախագահ Տնօրեն տնօրենի ուսումնական աշխատանքնե-րի գծով տեղակալ	

	աջակցության ծառայությունների կազմա-կերպման գործում ✓ Ներկայացնել ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները՝ մասնակցելով դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին ✓ Օգնել դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում: **գ)** մանկավարժական խորհրդի աշխատանքը թափանցիկ դարձնել աշխորհրդի և ծնողխորհրդի համար ✓ Մանկավարժական խորհրդի աշխատանքներին (ըստ անհրաժեշտության) հրավիրել աշակերտական խորհրդի նախագահին (անդամներին), լսել նրանց առաջարկությունները, հաղորդումները իրենց նախաձեռնությունների մասին ✓ Դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժ-ներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:	ուստարվա ընթացքում	Ծնողական խորհուրդ ՈՒսուցչի օգնական տնօրեն ծնողական խորհուրդ աշխորհուրդ	
14	Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման, առողջ քննադատաբար մոտեցման համար:	մշտապես	տնօրինություն	
15	Կարգավորել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների և մանկավարժական գործընթացի մասնակիցների իրավահարաբերությունները:	մշտապես	տնօրինություն	
16	Մասնակցել ղեկավարած դասարաններում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը,	մշտապես	տնօրինություն դասվար-	

	բացահայտմանը, գնահատմանը և ման-կավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը:		դասղեկ ուսուցիչներ	
17	Կատարել ամենօրյա ստուգումներ՝ դասարանների սանիտարական վիճակի, երեխաների և սովորողների հիգիենայի, միջանցքների և սանհանգույցների մաքրության ուղղությամբ:	մշտապես	հերթապահ ուսուցիչներ	
18	Կազմակերպել բժշկական թեմաներով զրույց-զեկուցումներ ըստ սովորողների տարիքային առանձնահատկությունների (ըստ անհրաժեշ-տության՝ հեռավար):	մշտապես	դասղեկներ, դասվարներ	
19	Կարևորել ՀՀ ԶՈՒ ստեղծման անհրաժեշտությունը և նրա դերը անկախության ապահովման գործում:	մշտապես	զինղեկ, տնօրինություն	
20	Կազմակերպել տարհանում տարեկան առնվազն երկու անգամ:	ուստարվա ընթացքում	զինղեկ, տնօրինություն	
21	Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումներ(ըստ անհրաժեշտության՝ հեռավար). ցերեկույթներ, մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, ցուցահանդեսներ, գրքերի քննարկումներ, այցելություններ թանգարաններ, պատի թերթերի լույս ընծայումներ, պատմամշակութային էքսկուրսիաներ:	ուստարվա ընթացքում	դասվարներ, դասղեկներ , ծնողխորհուրդ	
22	Կազմակերպել հերթապահություն 5-12-րդ դասարանների սովորողների կողմից՝ ապահովելով կարգապահություն և մաքրություն(«COVID-19»-ով պայմանավորված):	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
23	Նպաստել աշխարհայացքի, բարոյական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների, սովորողների սոցիալական հմտությունների ձևավորմանը:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	

24	Հետևել սովորողների տարիքային առանձնահատկու-թյունների իմացական հնարավորություններին՝ ըստ կրթական պատրաստվածության:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
25	Սովորողների տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ❖ Հետևել լուսավորության ապահովմանը (էլեկտրոնային և բնական) ❖ Ապահովել օդափոխությունը, մաքրությունը, դպրոցի բակի ծառապատումը, խնամքը ❖ Կազմակերպել սանիտարական օրեր ❖ Հետևել պատվաստումների, բուժզննումների ժամանակին կատարելուն:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնտեսվար,	
26	Դասղեկի ժամերին կարևորել. « Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան որպես ընդհանուր կրթության բաղկացուցիչ մասերից մեկը: ՈՒսուցման նպատակը համարել սովորողների կողմից գիտելիքների յուրացումը, նրանց հմտությունների և ունակությունների զարգացումը, տեսականը գործնականորեն կիրառելու կարողությունների ձեռքբերումը՝ խաղաղ և պատերազմական ժամանակների բարդ իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ գործո-ղությունների դիմելու համար:	ուստարվա ընթացքում	զինղեկ, ծնողխորհուրդ	
27	Խիստ հետևել դասասենյակների, միջանցքների մաքրությանը և գույքի պահպանմանը՝ պատասխանատվությունը դնելով դասվար-դասղեկների վրա:	ուստարվա ընթացքում	տնտեսվար	
35	Յուրաքանչյուր աշակերտի մոտ արթնացնել հե-տաքրքրություն, և հասնել նրան, որ ուսուցիչը գտնի աշակերտին հետաքրքրող ուղղությունը:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	

36	Կարևորել կրթության հասանելիությունը բոլորի համար. ակնհայտ է, որ աշխարհում լավ հանրակրթական համակարգ ունեն այն երկրները, որոնք առավելագույնս հասանելի են դարձնում կրթությունը բոլորի համար:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
37	Կարևորել 1-12-րդ դասարանցիների համար նախատեսված բաժանորդային համակարգի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագիրը, որը նոր էջ է բացելու կրթության և մշակույթի ոլորտում. «Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր աշակերտի կտրվի երեք մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորություն: Այդ հաստատություններն են՝ թանգարան կամ պատկերասրահ, թատրոն և համերգասրահ: Համերգասրահ ասելով՝ նկատի ունենք դասական երաժշտության համերգասրահը»:	ուստարվա ընթացքում	ՀՀ ԿԳՄՍՆ տնօրինություն ծնողխորհուրդ սովորողներ	
